

**Ռուստոյան ճանտորիա**

**ԱԶԳԱՅԻՆ**

**ՓՈՔՐԱՄԱՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

(Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից իրականացված և պլանավորված միջոցառումները «Բազմալեզու կրթության օժանդակման ծրագրի» շրջանակներում)

Վաստանի կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է միասնական քաղաքականություն, որպեսզի ապահովի կրթության մատչելիություն բոլոր աշակերտների, այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ազգային փոքրամասնությունների կրթությունը քննարկվում է ոչ միայն նրանց ակադեմիական նվաճումների բարելավման, այլև որպես նրանց հասարակության մեջ ինտեգրման և աշխատանքային շուկայում զբաղվածության միջոց: Ազգային փոքրամասնությունների կրթության նկատմամբ գոյություն ունեցած միասնական քաղաքականության համապատասխան, Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը նպատակադրում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական ինտեգրում բազմալեզու կրթության ներդրման միջոցով:

Բազմալեզու կրթությունը հանդիսանում է կրթության այնպիսի ձև, որտեղ, որպես տարբեր առարկաների թե առարկաների խմբի ուսուցման լեզու, կիրառվում է երկու կամ ավել լեզու: Մի քանի լեզվով միաժամանակ ուսուցումը նպաստում է աշակերտների մեջ լեզվական կարողությունների զարգացմանը: Երկլեզու կամ բազմալեզու կրթությունը երեխաներին լեզվի ավելի հիմնավոր և խորը ուսանման, ինչպես նաև նրա արդյունավետ կիրառման հնարավորություն է տալիս: Բազմալեզու կրթություն ստանալով՝ աշակերտը կկարողանա հաղորդակցվել պետական և մայրենի լեզվով և դրանք գործանականում կիրառել:

Ինչպես ցույց են տվել բազմաթիվ հետազոտությունները, բազմալեզու կրթությունն այն ուղին է, որը ձեռնառու է ինչպես մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության ներկայացուցիչներին:

- անհրաժեշտություններին համապատասխան:

Մայրենի լեզվով կրթությունը երեխաներին և աշակերտներին տալիս է իրենց մտավոր կարողությունները լրիվ զարգացնելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, նրանք տիրապետում են լեզվական կարողությունների այն լեզվով, որը նրանց կենսականորեն է անհրաժեշտ: Բազմալեզու կրթություն ստանալու ևս մեկ հիմնական առավելությունն այն է, որ այն նպաստում է ինտերմշակութային հմտությունների և հանդուրժողականության զարգացմանը, ինչն, ի վերջո, բազմազգ երկրում պայմանավորում է խաղաղ հասարակության ձևավորում: Համապատասխանաբար, Վրաստանում բազմալեզու կրթությունը պետք է ընկալվի որպես քաղաքացիական ինտեգրման քաղաքականության արդյունավետ գործիք, որը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին պետական լեզվի տիրապետման լավագույն հնարավորություն է տալիս և, միևնույն ժամանակ, ապահովում է նրանց մայրենի լեզուների պահպանում:

2008 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունում ԵԱՀԿ աջակցությամբ կազմվեց քաղաքականության փաստաթուղթ և գործողությունների պլան (2009-2014) «Ազգային փոքրամասնությունների ինտեգրում բազմալեզու կրթության միջոցով»:

Բազմալեզու ուսուցման աջակցության ծրագիրը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- Մատչելիության սկզբունք՝ բազմալեզու կրթությունը հավասարաչափ մատչելի է բոլոր աշակերտների համար. բոլոր դպրոցները, անկախ ուսուցման լեզվից, իրավունք ունեն կազմել և ներդնել բազմալեզու կրթական ծրագրեր, իրենց ռեսուրսների նախատեսմամբ, աշակերտների և ծնողների
- Ինտեգրման սկզբունք. պետության մեջ բազմալեզու ուսուցումը պետք է



2009 թվականին «Բազմալեզու ուսուցման օժանդակման ծրագրի» շրջանակներում ստեղծվեց Վրաստանի կրթության և գիտության նախարարության բազմալեզու կրթության աշխատանքային խումբ, որը պատասխանատու է ծրագրի համակարգման, նրա ժամանակին և արդյունավետ իրագործման և նաև ծրագրի մոնիտորինգի և գնահատման համար:

ԵԱՀԿ փորձագետների օգնությամբ 2009 թվականի օգոստոս-սեպտեմբերին նախարարության բազմալեզու կրթության աշխատանքային խմբի անդամների համար անցկացվեց 10-օրյա վարժանք:

Ծրագրի շրջանակներում ընտրվել են 10 տեղական վարժողներ, որոնց մասնագիտական վերապատրաստումն ապահովել են ԵԱՀԿ միջազգային փորձագետները:

Մասնագիտական վարժանքներ են անցկացվել նաև. 40 փորձարկային դպրոցների տնօրենների, 30 կրթական ռեսուրս-կոնտրոլի աշխատակիցների, 64 լիազորագրված փորձագետների, 40 փորձարկային դպրոցների 603 ուսուցիչների համար:

2009 թվականին «Բազմալեզու ուսուցման օժանդակման ծրագրի» շրջանակներում կազմվեց բազմալեզու ուսուցման ծրագրերի գնահատման հրահանգ լիազորագրման փորձագետների համար, բազմալեզու կրթության դասագրքի նախագիծ ուսուցիչների համար, բազմալեզու կրթության ծրագրի մոնիտորինգի և գնահատման պլան և բազմալեզու կրթության տեղեկատվական բրոշյուրներ:

2009 թվականի նոյեմբերի 27-ին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը, ԵԱՀԿ և ԱՄՆ-ի Միջազգային գործակալության (USAID) աջակցությամբ, անցկացրեց գիտաժողով «Բազմալեզու կրթությունը Վրաստանում», որը նպատակն էր բազմալեզու ուսուցման աջակցության ծրագրի շրջանակներում արդեն իրականացված և պլանավորված

միջոցառումների մասին տեղեկության տարածումը, նաև փոքրամասնությունների կրթական ծրագրերի ստեղծման և ներդրման բնագավառում նորությունների մասին տեղեկությունների մատուցումը հետաքրքրված անձանց, փորձարկային դպրոցների ներկայացուցիչներին ապագայի պլանների մասին հաշվետվության ներկայացումը և միասնական երաշխավորությունների մշակումը՝ կապված ծրագրի բարելավման հնարավոր ուղիների հետ:

2010 թվականի փետրվարին Վրաստանի կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «Բազմալեզու ուսուցման օժանդակման ծրագրի» շրջանակներում պլանավորվում են բազմաթիվ միջոցառումներ.

- Դպրոցների բազմալեզու ծրագրերի հաստատում և զրանցման մեխանիզմների կազմում:
- Դպրոցների համար լրացուցիչ ուսումնական նյութերի պատրաստում և տպագրում (Ուսուցչի ձեռնարկ):
- Վարժանքային մոդուլի պատրաստում, տպագրում և առաքում:
- Բազմալեզու ուսուցման մասին մեթոդաբանական ֆիլմի նկարահանում:
- Ծրագրի շրջանակներում ընտրված փորձարկային դպրոցներին նպատակային սուբսիդիաների տրամադրում՝ բազմալեզու ուսուցման ծրագրի մեջ ընդգրկված մանկավարժների համար լրացուցիչ հոնորարների հատկացման նպատակով:
- Փորձարկային դպրոցների ուսուցիչների և հոգաբարձուների խորհուրդների անդամների համար 3 տարածաշրջանային սեմինարի անցկացում:
- Դիդակտիկ նյութերի գնում՝ բազմալեզու ուսուցման ծրագրի փորձարկային դպրոցներին որպես նվեր փոխանցելու համար:
- Բազմալեզու ուսուցման ծրագրի փորձարկային դպրոցներին որպես նվեր փոխանցելու համար ուղի- և տեսա-

տեխնիկայի և վրացական ֆիլմերի հավաքածուի գնում:

- Սեկնարկային հետազոտության անցկացում բազմալեզու կրթությունից:

- Տեղեկատվական և հասարակական գիտակցության բարձրացման նպատակով տարբեր միջոցառումների անցկացում:

**«ԲԱԶՄԱԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ» ԸՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ՓՈՐՁԱՐԿԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ**

. . . . .

- |                                      |                                      |
|--------------------------------------|--------------------------------------|
| 1. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №146   | 21.ԶՎԵՍՈ ԲՈԼՆԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ №1  |
| 2. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №152   | 22. ԳԶԼԵԻԼԻՍԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ       |
| 3. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №64    | 23. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №1  |
| 4. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №132   | 24. ԱԳԹԱԶԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ           |
| 5. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №83    | 25. ԳԱՐԴԱԲԱՆԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ        |
| 6. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №136   | 26. ԿԱՊԱՆԱԽՉԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ        |
| 7. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №96    | 27. ՍԱՄՏՐԵԴԻԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №4 |
| 8. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №41    | 28. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №1 |
| 9. ԼԱԳՈԴԵՆԻԻ ԳԱՐԱԶԱԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ | 29. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №2 |
| 10. ԾԻԹԵԼԾՂԱՐՈՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ      | 30. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №3 |
| 11. ԳԱՆՋԱԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ           | 31. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №4 |
| 12. ՅՈՐՄՈՒՂԱՆԼՈՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ     | 32. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №5 |
| 13. ԹԱԶԱՔԵՆԴԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ         | 33. ՍԽՎԻԼԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ         |
| 14. ՆԵՐՔԻՆ ՍԱՐԱԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ     | 34. ԱԽԱԼՑԻԽԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №2   |
| 15. ԱԼԳԵԹԻ ԹԱԶԱՔԵՆԴԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ  | 35. ՆԻՆՈԾՍԻՆԴԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ №1   |
| 16. ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №3  | 36. ՆԻՆՈԾՍԻՆԴԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ №2   |
| 17. ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №2  | 37. ՍԱԹԽԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ           |
| 18. ՎԱԽՏԱՆԳԻՍԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ №1    | 38. ՍԵԾ ԿՈՆԴՈՒՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ      |
| 19. ԳՈՐԻԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №6       | 39. ԳԱՆՋԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №2     |
| 20. ԶԱՆԴԱՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ           | 40. ԳՈՐԵԼՈՎԿԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑ    №2 |